ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 06-ը մարտի 2017թ.
ժամը 10^{30}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ. Սիմոնյան,
ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության բուժական և նյութատեխնիկական մատակարարման բաժանմունքի ավագ սպա, բ/ծ կապիտան Ն. Հարությունյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Ա. Հակոբյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16 – ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4.Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ռ. Մարդոյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «[illegible]» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում
1	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
2	«Մեդիտեք» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:.

2 . «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ռ. Մարդոյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են: «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից բեռնված էլեկտրոնային հայտին որևէ փաստաթուղթ կցված չէ, ուստի հանձնաժողովը դրանք բացելու և գնահատելու հնարավորություն չունի: Հիմք ընդունելով նշված հանգամանքը՝ հանձնաժողովը որոշեց մերժել «Մեդիտեք» ՍՊԸ-ի հայտը:

2.3 «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ 15/16-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ռ. Մարդոյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել 1 մասնակից.

Հ/հ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակ	Նախ. գին/դրամ/	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի առաջարկ	1-ին տեղ զբաղեցնող մասնակից
1.	Անզգայացման սարքավորում	հավաքածու	2	46,000,000	29,000,000	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
2.	Ջրի դեիոնիզատոր	հավաքածու	2	18,000,000	16,800,000	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Ընթացակարգի շրջանակներում բանակցություններ չեն վարվել:

3.4 Մասնակցի կողմից ԵՏՄ արտադրության ապրանք չի առաջարկվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ռ. Մարդոյան)

4.1 **15.03.17թ.** «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի բոլոր չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի *«Ֆինանսական միջոցներ»* որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ռ. Մարդոյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ռ. Մարդոյան)

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Վ. Գասպարյան
Գնահատող	Ա. Հակոբյան
Գնահատող	Ռ. Սիմոնյան
Գնահատող	Ն. Հարությունյան
Գնահատող	Կ. Բրուտյան
Գնումները համակարգող՝	Ռ. Մարդոյան